1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՀԱՅՏՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1-ին և 2-րդ փուլերի հայտերի լրացման ընթացքում Դիմորդը ոչ մի հարցով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ընդունող հանձնաժողով չի այցելում

1-ին փուլով (ընդունելության կարգի 14-րդ կետ) դիմող դիմորդներն ընդունելության քննությունների և մասնագիտության հայտագրման դիմում-հայտը **dimord.am** կայքի միջոցով ԳԹԿ են ուղարկում **էլեկտրոնային (առցանց) եղանակով՝ ս.թ. ապրիլի 15-ից մինչև մայիսի 10-ը ներառյալ, մայիսի 10-ին՝ մինչև ժամը 18:00:**

2-րդ փուլով (ընդունելության կարգի 15-րդ կետ) դիմողները՝ ս.թ. **հունիսի 26-ից մինչև հուլիսի 1-ը ներառյալ, հուլիսի 1-ին՝ մինչև ժամը 17:00**:

Ներբուհական քննությունների անցաթուղթ տրամադրում է բուհը:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի դիմորդները դիմում-հայտի լրացման հետ կապված խորհրդատվություն ստանալու են հեռախոսազրույցի միջոցով, զանգահարելով **096987654 (Վիվա), 096557556 (Բիլայն)** հեռախոսահամարներով՝ պատասխանատու քարտուղար **Վահան Աղաբաբյանին**:

Նախատեսված է նաև առանձին էլեկտրոնային փոստի հասցե՝ **vahan.aghababyan@ysu.am**, որի միջոցով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի դիմորդը կարող է իր հարցերն ուղղել գրավոր եղանակով: Նշված կապի միջոցները գործում են միայն դիմում-հայտերի ընդունման համար վերը նշված ժամկետներում և սահմանված աշխատանքային օրերին ու ժամերին:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ ընդունված դիմորդները օգոստոսի 25-ից մինչև օգոստոսի 27-ը ընդունող հանձնաժողով պետք է ներկայացնեն *պահանջվող փաստաթղթերը*: